ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

29.12.2025թ. **ք. Թալին**

Տեղեկանքը կազմված է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի մարզային բաժնի Թալինի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող **Գևորգ Գենջոյանի** կողմից

Հիմք՝ Արագածոտնի մարզային բաժնի Թալինի տարածաշրջանի բաժանմունքում պարտապան **Արտյոմ Հարությունի Բաղդասարյանի /ՀԾՀ՝ 3412850012/** վերաբերյալ հարուցված թիվ **13898189** կատարողական վարույթը

Գնահատման առարկա **«ԻԺ-17» տեսակի Ռ-05510 գործարանային համարի 16 տրամաչափի որսորդական հրացան**

Զննման աշխատանքները կատարվել են **29.12.2025թ.**

ԶՆՆՈՒՄ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հատուկ պահպանվող տարածքում զննվել է **«ԻԺ-17» տեսակի Ռ-05510 գործարանային համարի 16 տրամաչափի որսորդական հրացանը**:

Հրացանի զննումն իրականացվել է տեսողական զննության եղանակով: Զննման ընթացքում պարզվեց, որ հրազենի մեխանիզմները և դետալները շահագործման ընթացքում ձեռք են բերել բնական շահագործողական մաշվածություն, դրան համապատասխան որակի և գոյապաշարի կորուստ:

Արտաքին զննության ժամանակ միշտ չէ, որ հնարավոր է լինում հայտնաբերել դետալների և հանգույցների թաքնված արատները, որոնք կարող են ի հայտ գալ միայն հանգույցի կամ դետալի անմիջական բացման և ստուգման ժամանակ:

Հրացանի արտաքին տեսքը պատկերված է սույն տեղեկանքին կից լուսանկարչական հավելվածում, որը հանդիսանում է տեղեկանքի անբաժանելի մասը:

Շուկայական արժեքի որոշում

Գնահատման այս մեթոդի կիրառման նպատակով կատարվել է շահագործված նույն հրացանի առաջարկների տվյալների ուսումնասիրություն:

Գնահատումը կատարվել է ելնելով դրանց կողմնորոշիչ միջին շուկայական արժեքի ելակետային ցուցանիշից, որի որոշման համար կիրառվել է հաշվարկի համեմատական վերլուծության մեթոդը՝ օգտվելով ինտերնետային կայքերում վաճառքի հանված տրանսպորտային միջոցների փաստացի տեխնիկական և ապրանքային վիճակը, թողարկման տարեթիվը, մաշվածության աստիճանը:

Երկրորդային շուկայում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են հետևյալ առաջարկվող գների ընտրություն.

Մոդելը՝ **«ԻԺ-17» 150,000 ՀՀ դրամ,**

Մոդելը՝ **«ԻԺ-18» 130,000 ՀՀ դրամ**

Մոդելը՝ **«ԻԺ-27» 170,000 ՀՀ դրամ**

Հաշվարկված արժեքի մեծությունը

«ԻԺ-17» տեսակի Ռ-05510 գործարանային համարի 16 տրամաչափի որսորդական հրացանի ներկայիս շուկայական արժեքը՝ հաշվի առնելով թողարկման տարեթիվը, փաստացի տեխնիկական և ապրանքային վիճակը **29.12.2025թ.** դրությամբ կազմում է **150,000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ**:

Օգտագործված աղբյուր՝ ինտերնետային կայքեր /list.am/

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ Գ. ԳԵՆՋՈՅԱՆ